

ՆՇԽԱՐՆԵՐ ՄԵՐ ԱՆՄԱՀՆԵՐԻՆ

11. — ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՌ Հ. ԼԵՒՈՆ ԱԹՃԵԱՆ

Հետեւեալ երեք նամակները Դանիէլ Վարուժանի պատանեկան յիշատակներէն են, երբ նա դեռ աշակերտ էր Կ. Պոլսի մեր Բաղկեդոնի Վարժարանին եւ կը ստորագրէր Չուպուզբեան: Այդ նամակները կը գտնենք թղթածրարին մէջ Մխիթարեան Ուխտիս միարան խոստումնալից երեսնամեայ վաղամեռիկ Հ. Լեւոն Աթճեանի († 1918ին):

Ողբացեալը, մկրտութեան անունով Յովհաննէս, ծնած էր Կ. Պոլսի 1888ին, Բրդնիկցի ծնողներէ. ահա ատկից հայրենակցական մասնակի կապը որ շնորհաւոր է Դանիէլի նամակներէն մէկուն մէջ, կապ մը՝ աւելի ամրացած աշակերտակցութեամբ Կ. Պոլսի մեր այդ Վարժարանին մէջ:

Աւելորդ է շնորհի սկսնակի հանդերձին մէջ իսկ շնորհալի զգացումները, որոնցմով կ'արտայայտուի Վարուժան իրեն հայրենակցին եւ աշակերտակցին հանդէպ:

Նկատողութեան արժանի է մանաւանդ միւս նամակը, որ թէեւ Յովհաննէսի հօր կողմէն ստորագրուած, սակայն ամբողջապէս Վարուժանի գրչէն է՝ իմաստներուն խորութեամբ եւ հանդէպ քահանայական վիճակին ունեցած պատկառանքով եւ զմայլանքով:

Սիրելի որդեակ,

Կ. Պոլսի 22/5 Ապրիլ 1902 .

Նամակներդ միշտ եւ ուրախութեամբ կը ստանամք. կը գրես եւ կը գրես, շնորհակալ եմք: Հիւանդ ես եղեր, այդ լուրիդ վրայ տրտնեցամք, անցած ըլլայ: Մարմնական հիւանդութիւնը միայն գմարդ կը տխրեցնէ, իսկ հոգեկամը — զոր գիտեմ պիտի չունենաս — զԱստուած կը զայրացնէ...:

Աշխատէ բարոյն՝ որքան որ կը փափաքես, որքան որ կրնաս. Աստուած պիտի պսակէ աշխատութիւնդ:

Սիրելի որդեակ, կը յուսամք որ մեր ակնկալիքը եւ վերապատուելի Հարց աշխատանքը ի դերեւ չես հաներ: Զքեզ մեծցուցինք մինչեւ այդ հասակդ՝ որ ի հարկին ինքզինքդ գտնես կրօնքին եւ մարդկութեան: Արդ սորվէ ըլլալ ճշմարիտ պաշտօնեայ Աստուծոյ եւ ճշմարիտ վարդապետ մարդկանց հոգիներու. համակերպէ՛ եւ հնազանդէ՛ ապագայիդ՝ զոր ծնողքդ մտադրեց եւ վարժապետները պիտի պատրաստեն. միով բանիւ, ո՛ր ապագայ քահանայդ, հնազանդէ՛ երկնից՝ միշտ մտքիդ մէջ ունենալով այս խօսքը՝ Թէ «Քահանան Աստուծոյ պաշտօնեան է...»:

Ծնողքդ ՄԻՔԱՅԷԼ Պ. ԱԹՃԵԱՆ

Փոքրիկ բարեկամս

Հայրդ երբեմն նամակներդ ինձի կու տայ, զորս ուրախութեամբ կը կարդամ. վայելուչ պարգուքեամբ մը գրուած եմ անոնք, եւ անկեղծիկ զգացմանցդ եւ սիրոյդ դրոշմը կը կրնեմ: Ես միշտ գգեց կը յիշեմ եւ յուշերու մէջ կը սիրեմ յաւիտ: Ապրէ՛, ուրիշ բան չունիմ ըսելիք, զի ըսելիքներս մինչեւ ցարդ վարժապետներուդ եւ ծնողացդ ըսածներուն կրկնումը պիտի ըլլայ. ապրէ՛ եւ աշխատէ. «Աշխատութիւնը կենաց եւ ապագային քահն է»:

Իմ տեղս համբուրէ վեր. Հայր Աթանասի սուրբ աչքը, կ'աղաչեմ չի մոռնաս: Մասնաւոր սիրոյ բարեկներս յիշէ Մեղրեանին:

Մնամ բոյդ

ԴԱՆԻԷԼ ԶՈՒՊՈՒԳ-ՔԵԱՐԵԱՆ

Սիրեցեալդ իմ Յովհաննէս Աթճեան

Հայրենակցութեան եւ բարեկամութեան սիրով կը յիշեմ գգեց անդադար, եւ այս անկեղծ յիշումներուս մասամբ իւրիք յագուրդ տալու համար ներկայ երկտողիկովս գգեց կը բարեկամ, ու կը մաղբեմ ի խոր սրտէ որ սուրբ ուխտիդ մէջ Աստուած հաստատ պահէ:

Սիրելի Յովհաննէս, կը խնդրեմ որ հետեւեալը՝ Թէ կարելի է՝ Արմենակ Եղորդ պեանի կարդաս:

Բոյդ

ԴԱՆԻԷԼ ԶՈՒՊՈՒԳ-ՔԵԱՐԵԱՆ

ՄՈՒՐԱՏ ~ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

ԵՒ ԻՏԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՎՃԻՌԸ

Մուրատ՝ Ռաֆայէլեան Վարժարանի մատուցած ծառայութիւնը աղբիւր մէջ՝ տոհմային դաստիարակութեան ու եւրոպական մշակոյթի ծաւալման տեսակէտով՝ անժըխտելի իրականութիւն է, զոր չօչափած է, մանաւանդ ներկայ պատերազմէն առաջ, այլ եւ այլ զաղութներու մէջ ցրուած բովանդակ Հայութիւնը:

Իտալական Կառավարութիւնը զանազան ժամանակներու մէջ զիտցաւ գնահատել Մխիթարեան Հայրերու ձեռքով այդ Վարժարանին մէջ կատարուած դործունէութիւնը եւ բերած օգտակար ծառայութիւնը նոյն իսկ իտալական լեզուի ու դրականութեան նկատմամբ:

Իր այս գնահատանքը ցոյց տուաւ նախ 1897ին Ապրիլ 11ի Արքայական Հրովարտակով մը՝ կարգելով հայկական վարժարանը՝ հաւասարագոր Իտալիոյ Պետական Լիկէններուն, այնպէս որ՝ մեր աշակերտները այդ օրէնքին զօրութեամբ իրաւունք կը ստանային յաճախելու Պետական Հաւարարանները եւ հետեւելու բարձրագոյն ուսմանց ճիւղերուն:

Փաշական Կառավարութեան օրերուն 1924 Մայիս 22ի նոր վճռագրով մը վերահաստատուեցաւ նախնիթացարար տրուած այդ իրաւունքը եւ առանձնաշնորհութիւնը: Ու դարձեալ Կրթական Նախարարութեան կողմէ միեւնոյն հրամանագիրը ինքնաբերարար (motu proprio) կրկնուեցաւ 1938ին, երբ Միջնակարգ վարժարաններու վերանորոգման առթիւ կը քննուէին զանազան հաստատութիւններու նկարագիրը ու կազմը եւ կը վերցուէին շատ մը ուրիշ վարժարաններու մենաշնորհները:

Իսկ այս վերջին տարին (1941) Կրթական Նախարարութեան նոր օրէնքով մը հրահանգ կը տրուէր Իտալիոյ մէջ գոյութիւն ունեցող բոլոր օտար վարժարաններու կամ հաստատութիւններու՝ վերանորոգելու հաստատութիւններու համար:

Մուրատ՝ Ռաֆայէլեան Վարժարանի մատուցած ծառայութիւնը աղբիւր մէջ՝ տոհմային դաստիարակութեան ու եւրոպական մշակոյթի ծաւալման տեսակէտով՝ անժըխտելի իրականութիւն է, զոր չօչափած է, մանաւանդ ներկայ պատերազմէն առաջ, այլ եւ այլ զաղութներու մէջ ցրուած բովանդակ Հայութիւնը:

Իտալական Կառավարութիւնը զանազան ժամանակներու մէջ զիտցաւ գնահատել Մխիթարեան Հայրերու ձեռքով այդ Վարժարանին մէջ կատարուած դործունէութիւնը եւ բերած օգտակար ծառայութիւնը նոյն իսկ իտալական լեզուի ու դրականութեան նկատմամբ:

Փաշական Կառավարութեան օրերուն 1924 Մայիս 22ի նոր վճռագրով մը վերահաստատուեցաւ նախնիթացարար տրուած այդ իրաւունքը եւ առանձնաշնորհութիւնը: Ու դարձեալ Կրթական Նախարարութեան կողմէ միեւնոյն հրամանագիրը ինքնաբերարար (motu proprio) կրկնուեցաւ 1938ին, երբ Միջնակարգ վարժարաններու վերանորոգման առթիւ կը քննուէին զանազան հաստատութիւններու նկարագիրը ու կազմը եւ կը վերցուէին շատ մը ուրիշ վարժարաններու մենաշնորհները:

Իսկ այս վերջին տարին (1941) Կրթական Նախարարութեան նոր օրէնքով մը հրահանգ կը տրուէր Իտալիոյ մէջ գոյութիւն ունեցող բոլոր օտար վարժարաններու կամ հաստատութիւններու՝ վերանորոգելու համար:

Մուրատ՝ Ռաֆայէլեան Վարժարանի մատուցած ծառայութիւնը աղբիւր մէջ՝ տոհմային դաստիարակութեան ու եւրոպական մշակոյթի ծաւալման տեսակէտով՝ անժըխտելի իրականութիւն է, զոր չօչափած է, մանաւանդ ներկայ պատերազմէն առաջ, այլ եւ այլ զաղութներու մէջ ցրուած բովանդակ Հայութիւնը: